ԹԱԳԱՎՈՐ, ՈՐ ՉՈՒՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ

ՂՈՒԿ. 1:33-35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փրկութուն, շնորհ, օրհնություն, առաջնորդություն, ուրախություն, ազատագրում և խաղաղության:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Եւ նորա թագաւորութեանը վերջ չի լինի: 34 Եւ Մարիամն ասեց հրեշտակին. Սա ի՞նչպէս կ՚լինի. ըստ որում ես այր չ՚գիտեմ: 35 Հրեշտակը պատասխանեց և ասեց նորան. Սուրբ Հոգին կ՚գա քեզ վրա, և Բարձրեալի զօրութիւնը քեզ վրա կ՚հովանավորէ, վասն որոյ և այն ծնուած սուրբն էլ Աստուծո Որդի կ՚կոչուի:

1. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐ

1 ՏԻՄ. 1:15-17

Ճշմարիտ է այս խօսքը և ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ մեղավորներին փրկելու, որոնց առաջինը ես եմ: 16 Սակայն նորա համար ողորմություն գտա, որ Հիսուս Քրիստոսը առաջ իմ մեջ ցույց տա բոլոր երկայնմտությունը՝ օրինակ լինելու նորանց, որ պիտի հավատան նորան հավիտենական կեանքի համար: 17 Բայց հավիտենական Թագավորին, այն անեղծին և անտեսանելիին, այն մէկ Աստուծուն լինի պատիվ և փառք հաւիտեանս հավիտենից. Ամէն:

Ի՞նչ Հիսուսն եկավ կատարելու. Նա ուներ մի հատուկ առաքելություն, որը հաստատված էր Աստծո կողմից: Հիսուսը եկավ և մահացավ մարդկության մեղքերի համար:

2. ԹԱԳԱՎՈՐ ՈՐ ԿԹԱԳԱՎՈՐԻ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ

ԵՍԱՅԻ 32:1

1 Ահա մի թագավոր արդարությամբ է թագավորելու, և իշխանները իրավունքով են իշխելու:

3. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐ

ԵԲՐ. 7:1-2

1 Որովհետև այս Մելքիսեդեկը Սաղէմի թագավոր էր. բարձրեալ Աստուծո քահանա. որ դիմավորեց Աբրահամին, երբոր նա թագավորների կոտորելուց ետ էր դառնում. և օրհնեց նորան՝ 2 Որին Աբրահամ ամեն բաներից տասանորդ էլ տուավ. նա առաջ թարգմանվում է արդարութեան թագավոր, և հետո Սաղէմի թագավոր, որ է խաղաղութեան թագավոր.

*Եփ. **2:14-18** - 14 Վասնզի նա է մեր խաղաղությունը որ երկուսին մէկ արեց և մէջտեղի բաժանող պատը՝ թշնամությունը քանդեց իր մարմնովը. 15 Հրամաններով դրած պատուիրանքների օրէնքը խափանելով. որ իրենով երկուսին մէկ նոր մարդ ստեղծէ, խաղաղութուն անելով. 16 Եւ երկուսին մէկ մարմնով հաշտեցնի Աստուծո հետ՝ իր խաչով, թշնամությունը նորանով սպանելով: 17 Եւ եկավ ավետարանեց խաղաղություն ձեզ հեռավորներիդ՝ և խաղաղութիւն*

մօտավորներին: 18 Վասնզի նորանով երկուսս մէկ Հոգով ունենք մօտենալը Հօր մօտ:

2. ՍՐԲԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ

ՀԱՅ. 15:3

3 Եւ երգում էին Աստուծոյ ծառա Մովսէսի երգը և Գառի երգը, ասելով. Մեծ և զարմանալի են քո գործերը, Տէր Աստուած Ամենակալ, արդար և ճշմարիտ են քո ճանապարհները, ով սուրբերի Թագավոր:

Ամփոփում

Հիսուս նրանց ասաց. 15 «***Իսկ դուք իմ մասին ի՞նչ էք ասում, ո՞վ եմ ես»:***

Մատ. 16:15-20 - 16 Սիմոն Պետրոսը պատասխանեց ու ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին»: 17 Հիսուս պատասխանեց եւ նրան ասաց նորան. Երանի քեզ, Սիմօն՝ Հոփանի որդի, որովհետեւ մարմինը եւ արյունը չհայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է: 18 Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, եւ այդ վէմի վրա կշինեմ իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն հաղթի նորան: 19 Եւ ես կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, եւ այն որ կապես երկրի վերա, կապուած կլինի երկնքում. եւ այն որ երկրի վրա արձակես, արձակուած կլինի երկնքում: 20 Այն ժամանակ իր աշակերտներին պատուիրեց, որ ոչ ոքի չասեն, թէ նա է Քրիստոսը: